*ելել է՝ դուրսն է վազել նախ վասն աղքատաց և զբ-
բան երկու կողմն մարմարէ երկու սեան գլուխքն այ-
բել է, զոր տեսեալ բազմաց՝ փառս տային Աստու-
ծոյ. եւ մինչեւ ցայսօր երևի տեղին բռնըված հրա-
գոյն, զոր ծանուցին խօնթքարին և նա հիացեալ հր-
բման եւ պէրաթ զրկեց յերուսաղէմ նալաթլամա-
յով, որ աղքատք թէ չունենան և երդվեն թէ չու-
նին՝ թողցին զնոսա ի ներս, զի մի զրկեսցին ի լու-
սոյն, զոր և մեք տեսաք զայն սիւնն աչօք մերովք
այրեալ և սևացեալ, և զայն էմրն քանդեալ ի վերայ
քարեայ տախտակի Յարութեան դուռն ի հրաչափա-
ռաց լուսոյն, զի գիրն տաճկերէն գրած է»* (Հ. Ամ.
1934, *թիւ* 11, 12, *էջ* 562-563)։

4. Քանդակեալ շուներու մասին հայ վանականի մը զրոյցը. — *Ս. Գերեզմանի Տաճարի դրան ճակա-
տին կողմը հիւսիսային արևելեան բակին անկիւնը կը
գտնուի զարդարանք մը՝ որուն համար նոյն տեղը յա-
ճախող վանականներու միջև զրոյց մը տարածուած
է։ Այդ մասին հայ վանականի մը հետեւեալ զրոյցը
հեղինակութիւն մը նկատուած է. նոյն անկիւնի զար-
դարանքին պատկերները զոյգ մը շուներ են։ Երբ ա-
սոնք ամբողջական էին՝ Երուսաղէմ գտնուած միւս
քանդակուած շուներուն հետ հաչելու յատկութիւն
ունէին. բայց — որ աւելի տարօրինակն էր — անոնք
կը հաչէին միայն այն ժամանակ՝ երբ հրէայ մը կ'անց-
նէր նոյն տեղերէն։*

*Սակայն, երբ քաղաքը հեթանոսներու տիրապե-
տութեան տակ ինկաւ, հրէաները պատեհ առիթը գը-
տան քանդակները կոտրելու, եւ այս կերպով նուի-
րական սրբավայրին հաւատարիմ պահապանները ար-*